

ԳՐԱՆՑԱՎԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱ

Ա. ՎԱՐԴԱՅԱՆ

ՕՐԵԴՐ. ՊՈՐՎԱՅՈՒԹԵՐԱ Դ.Օ.Ռ

Խ. 9. 1032

ԽՈՐՀՄԱՎԱՆ ԴԱՏԵՐԻ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲՈՒՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

633

4-30

ԴԵՏՐԱՍ
ՅԵՐԵՎԱՆ

1·9·3·1

633
-30

631.1.32

30 JUL 2010

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԽԵՑՑՐԱԿԻ ՏԱՐԱՐԱ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ 6210 (Բ).
ՊԱՏԵՐ 954
ՏԵՐԱՎՈՐ 8000

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ԴԱՇՏԵՐԻ
ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1931

08 AUG 2013

18562

«Այժմ մենք ունենք բավականաչափ Ցյուրիխան բազա, վարպեսզի հարվածենք կուլակությանը, կուրենք նրա դիմադրությունը, վերացնենք նրան վորպես դասակարգ և նրա արտադրությունը փոխարինենք կոլտնտեսությունների ու խորհունենությունների արտադրությունը»:

Ի. ԱՏԱԼԻՆ



ԲԱՅԼԵՎԻԿՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՐՆԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Խորհրդային գյուղը վիթխարի քայլերով սկսել է ընթանալ սոցիալիստական զարգացման ուղիով։ Ավելի ու ավելի ամրանում ե կոլտնտեսականների և բատրակչավորական մասսաների դաշինքը միջաների հետ։ Միասնական ֆրոնտ կազմաձ գյուղի բատրակչավորական տարրերի հետ՝ միջակը մասսայորեն սկսել է մտնել կոլտնտեսությունների մեջ։

Ընդարձակ ու խոր կերպով ծավալվում ե մեր գյուղի սոցիալիստական վերակառուցումը դասակարգային ամենակատաղի պայքարի պայմաններում, կուրակության կողմից ցուցյա տրվող վայրագ դիմադրության պայմաններում։



Կ 3570.63

«Մած բեկման» տարիները, Հնդամյակի առաջին յերկու տարիների ծրագրի կատարումը և գերակառարումը ցույց տվեցին, վոր վճռականագես ուժեղացել են սոցիալիզմի և բանվոր դասակարգի դիրքերը քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դեմ կատարվող ծավալուն հարձակման բազայի վրա:

Բանվոր դասակարգի և նրա կուսակցության կամքը, կոլտնտեսական, բատրակ-չքավորական և միջակ լայն մասսաների խանդավառությունն ու անժիշտական մասնակցությունը հնարավորություն տվեցին ծավալել Խորհրդային Միության խնդուստրացման և մեր գյուղի կոլեկտիվացման հետագա աճման համար մեծագույն բայցեկիցան տեմպեր:

Բայց եկկան յերկրորդ գարնան նախորյակին մենք ականատես ենք հետեւյալ փաստերին. ամրացել են մեր կոլտնտեսությունները, կոլտնտեսությունների շարքերն են մտնում բազմահազար նոր տնտեսություններ, հիմնականում վերացվել են անցյալ գարնանը կատարված սիսալները և խոտորումները:

Այդ հաջողությունները ձեռք են բերվել չնորհիվ կուսակցության գլխավոր զծի հաստատակամ կիրառման, չնորհիվ ինդուստրացման և կոլեկտիվացման պլանի վճռական իրագործման, չնորհիվ հակահեղափոխական տրոցկիզմի ջախջախման և կատաղի պայքարի ընդդեմ կուլակության գործակալությունը հանդիսացող աջ և «ձախ» ուղղորդունականների, ընդդեմ նրանց անսկզբունք բլոկի, ընդդեմ յերկերեսանիության և նըրանց վերաբերմամբ ցույց տրվող հաշովողականության:

Առաջիկ գյուղատեսական դարնան կոմպանիան

պետք է հանդիսանա մեր գյուղի արագ վերակառաւցման նոր շրջանը, վերակառուցում, վորը պետք է կատարվի գյուղի կուլակային տարրերի դեմ ուղղված ծավալուն հարձակումն ուժեղացնելու, կուլակության գործակալությունը հանդիսացող աջ և «ձախ» ուղղությանը դեմ մղվող պայքարն ե'լ ավելի ծավալելու բազայի վրա, կոլտնտեսությունների մեջ հետագայամ տնհատական նոր հազարավոր տնտեսություններ ներգրավելու, հին խորհութեանություններն ամրացնելու և նորնորի լայն ցանցը ծավալելու բազայի վրա, Անդրկովկասի դաշտերում տեխնիկական կուլտուրաներ տարածելու, ի թիվս վորի ընթացիկ տարբամ 250 հազար հեկտար բամբակի ցանքը լիովին պահովելու բազայի վրա:

1931 թվի գարնան կամպանիան պետք է դառնարամքակի դաշտերի ծավալման ընդհանուր լծակը, Խորհրդային Միության բամբակի անկախության բեկման շրջանը:

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՆՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ԲԵՐՔԱՑՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1931 թ. գարնան կամպանիան պետք է լինի բեկման կամպանիա վոչ միայն բամբակի և տեխնիկական մշակույթներին (թեյ, կենաֆ, ուամի և այլն) հատկացված տարածություններն ընդարձակելու տեսակետից, այլ և նա բեկման կամպանիա պետք է հանդիսանա խորհրդային դաշտերի բերքատվությանը բարձրացնելու գործում: Մեր խորհութեանություններն ու կոլտնտեսություններն այդ տեսակետից ներկայում ունեն բավականաչափ լայն հնարարիություններ:

Անդրկովկասի բամբակի գաշսնքի միջին թերթաւովությունը կառավարուկան վորոշումներով սահմանված է 8,5 ցենտներ յուրաքանչյուր հեկտարից: Այդ նվազագույնը թերթաւությունն է, ու մեր կոլտնեսությունները և չփակը ու միջակ անհատ տնտեսատերերը պետք է ոգտագործեն բոլոր հնարավորություններն են ավելի յեկամուտ ստանալու համար:

Վորոշք են խորհրդային դաշտերի բերքատվությունը բարձրացնելու հնարավորությունները:

Նախ և առաջ՝ կոլեկտիվացման ուժեղացումը:

Այսոր համարյա յուրաքանչյուր չքավոր և միջակ դյուղացի արդեն գիտեն, վոր գյուղատնտեսական մեքենաների՝ տրակտորների, կաշիչ, շարքացան, հնձող և այլն մեքենաների գործածությունը վոչ միայն հեշտացնում է աշխատանքը, այլ և միաժամանակ բարձրացնում է թերթաւությունը: Երանք գիտեն նաև, վոր տրակտորի գործածությունը կամ շարքացան կամ հնձող մեքենաներ պահելը մանր տնտեսությունների համար անհնարին ե: Այդ մեքենաներն ոգտավետ են, յերբ նրանց աշխատանքի համար կան հարյուրավոր հեկտար հոգեր:

Եեվ վոչ միայն մեքենաները, այլ ձիերը և յեղներն անգամ գյուղացիների մանր ցիրուցան տնտեսություններում չեն ոգտագործվում այնպես լիակատար կերպով, ինչպես դրանք կարելի յե ոգտագործել խոշոր կոլեկտիվ տնտեսության մեջ:

Պատասխան կուլակներին գյուղատնտեսական արտելի փորձը ցույց տվեց, վոր մինչդեռ այդ արտելում մի ձիու բնունքածությունը կազմել է 8,7 հեկտար, անհատական տնտեսության մեջ, հենց այնտեղ, նույն դյուղում, արտելի կողքին, մի ձիու բնունքածությունը

կազմել է 3,6 հեկտար: Պարզ ե, ուրեմն, վոր ձիերը կոլտնտեսության մեջ ավելի եժան են նստել: Ըստ սմին, կոլտնտեսությունն աշխատել և կատարելագործված մեքենաներով և գործիքներով, իսկ անհատականը հերկել և արորով: Դրանից ել հետեւում են տարրեր արդյունքներ: յուրաքանչյուր շնչին ըմկնող յեկամուտը կոլտնտեսության մեջ շատ ավելի յե, քան անհատական տնտեսության մեջ, վորովիետև կոլտնտեսության մեջ և բերքն ե բարձր և քե ստացվող մթերքն ել ավելի լավորակ ե:

Արդեն անցյալ տարին բազմաթիվ գաստերով ապացուցեց այդ գրությունը: Ստեփանավանի շրջանի միշտը կոլտնտեսություններում պարզվել ե, վոր հաշահատիկների գծով կոլտնտեսականի յեկամուտը 40 տոկոսով ավելի յե անհատականների համեմատությամբ, իսկ չե՛ վոր այդ կոլտնտեսառությունները դեռևս այն խոշոր, մեքենայացված տնտեսությունները չեն, վոր մենք ձգտում ենք ստեղծել:

Ուուսաստանի ՍևֆՀ-ում և Ուկրայինայում, վորտեղ կան խոշոր կոլտնտեսություններ, այնտեղ ընդհանուր և զուտ յեկամուտի այդ բարձրացումն ավելի ևս զգալի յե: Այնտեղ կոլտնտեսության միջին մեծությունը, ըստ զանազան բնագավառների, հասնում է 1200 և ավելի հեկտարի: Եեվ այդ շրջաններում մենք ունենք ուրիշ, ավելի ևս համոզեցուցիչ փաստեր կոլեկտիվ տնտեսավարության շահավետության մասին:

Որինակ, «Ուկրայարը» կոլտնտեսության մեջ միջին հաշվով մի տնտեսությանն ընկնում է 690 ոռուբու զանագան արտադրանք, մինչդեռ անցյալ տարի նույն հոգի վրա, այն ժամանակ կոլտնտեսության մեջ չմտած

Համագործակցությունը ստացել է ընդամենը 380
ռուբլու արտագրանք:

Զաֆարաբադ գյուղում (Հայաստան—Ղազարդուղու-
յու շրջան) չքաջոր Սաման Քոչարյանի յեկամուտը,
մինչև կոլտնտեսության մեջ մտնելը, կազմում եր տա-
րեկան 200 ռուբլի, իսկ կոլտնտեսության մեջ մտնելուց
հետո նա ստացել է 50 գումար և 800 ռուբլի դրամ:

Շահրիար գյուղի (Հայաստան) կոլտնտեսականնե-
րը, կոլտնտեսության մեջ մտնելուց հետո, ձեռք են
բերել յուրաքանչյուրը մեկական կով ու մի քանի վոչ-
խար և այլն: Բոլոր կոլտնտեսությունները լիուլի ա-
պահովված են հացով, մանուֆակտուրայով, շաքարով,
ոճառով և արդյունաբերական այլ ապրանքներով:

16-րդ համագումարում ընկ. Յա. Ա. Յակովլեվը
պատճել է, վոր «կոլտնտեսությունների մեջ համա-
խմբած գյուղացիների ցանքերի տարածությունն ա-
ճել ե անցյալ տարվա նրանց ցանքերի համեմատու-
թյամբ 45 տոկոսով»:

Մեզ մոտ, Անդրկովկասում չողտագործված վարե-
լահողեր մնում են տարեկան մինչև 50 տոկոսը: Սա-
կայն, մտնելով ճիշտ ցանքաշրջանի սիստեմը, ոգտվե-
լով տրակտորով, կամ համախմբելով իր քարշող ուժը,
գործածելով լավ գումարն, Անդրկովկասի բարակը,
չքավորը և միջակը դրամով նաև կըրճատեն չողտա-
գործված վարելահողերի տոկոսը և կընդարձակեն ի-
րենց ցանքերի տարածությունը:

«Ողտագործելով կատարելագործված գործիքներ
և մեքենաներ, գյուղատնտեսի ղեկավարությամբ ռա-
ցիոնալ տնտեսություն վարելով, կոլտնտեսությունը
40-50 տոկոսով բարձրացնում է բանվորական ուժի և

արտադրության միջոցների ոգտագործման ուղարկե-
առությունը», — ասում ե ընկ. Յակովլեվը հիմնվելով
82.000 կոլտնտեսությունների հետազոտություններից
ստացված նյութերի վրա, կոլտնտեսություններ, վո-
րոնք իրենց մեջ համախմբել են Միության սահմաննե-
րում մի քանի միլիոն գյուղացիներ: Իսկ դա նշանա-
կում ե, վոր գյուղացու աշխատանքի արդյունքը կոլ-
տնտեսության համար մեկ ու կես անգամ ավելի յև քան
անհատական տնտեսության մեջ: Միավորելով հողը,
ինվենտարը և իրենց աշխատանքը, չքավորն ու միջտ-
կը դրանով իսկ ավելացնում են իրենց տնտեսության
ապրանքայինությունը:

«1913 թվին կալվածատերերը և կուլտուրայի տակիս ե-
ցին ամբողջ ապրանքային հացի մոտ 2/3 մասը, իսկ
ներկա տարում հանրային սեկտորը, հանձին կոլտնտե-
սությունների և խորհանտեսությունների, կտա ամ-
բողջ ապրանքային հացի ավելի քան կես մասը» (Յա.
Ա. Յակովլեվի Համբկ (բ)Կ 16-րդ համագումարում տր-
գոծ զեկուցումից):

ԽՐԱՐԴԱՅԻՆ ԴԱՅՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Անդրկովկասի գյուղատնտեսության գլխավոր
խնդիրն ե—տեխնիկական կոլտուրայի (բամբակի, թեյ,
ռամի, կենափ, ծխախոտ, սոյա և այլն), նաև կաթնա-
տու և մսացու տնասունների բուծման լայն և արագ
զարգացումը:

Մենք արդեն ասացինք, վոր Անդրկովկասի 1931 թ.
բամբակի դաշտերի միջին բերքատվությունը կառավա-
րության վերոբաժնում սահմանված և 8,8 դենաներ (55

լիութ) յուրաքանչյուր հեկտարից, իսկ բամբակի ցանքնեն հատկացված ամբողջ տարածությունը սահմանված է 250.000 հեկտար:

Իրագործելի՞ յեւ արդյոք այդ խնդիրը:

Այո՛, դա իրագործելի յեւ, դա կարող է և պետք է իրագործվի:

Դրա իրագործման ուղիներից մեկը մենք արդեն մատնանշեցինք: Դա կոլեկտիվացման ուղին է:

Դաշտերի կողեկտիվ մշակումը, ինչպես մենք արդեն համոզվեցինք հացահատիկային շրջանների որինակից, պետք է ավելացնի և բամբակի համար հատկացված հողերի տարածությունը, թեկուզ հենց այն պատճառով, վոր կոլտնտեսության դաշտերում գոյություն չեն ունենա միջնահատեր: Կավելանա այդ տարածությունը նաև այն դեպքում, յեթե բամբակի ցանքին հատկացվեն կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների բոլոր պիտանի հողերը և յեթե, վերջապես, սահմանվի ճիշտ ցանքաշրջան և դաշտերը մաքրվեն բարերից, վորոնցով հատկապես լիքն են Հայաստանի ցանքաղաշտերը:

Սակայն բանը միայն բամբակին հատկացվող տարածությունների ընդարձակումը չեն: 250.000 հեկտար բամբակի ցանքի համար հատկացնել մենք կարող ենք: Բայց այդ դեռ ևս քիչ են: Միաժամանակ պետք է մտածել և ամեն միջոց ձեռք առնել բամբակի բերքի բարձրացման համար, այսինքն ճիշտ կատարել բամբակի ցանքը, ապահովել պատշաճ հնատքը բամբակի դաշտերի վերաբերմաբ և այլն:

Բոլոր այս ձեռնարկումները մատնանշված են ադրբեյնիմումի վերտիպարագաներու արդեն հբուութիված վո-

րոշման մեջ: Այդ ազրումինիմումը թվարկումն է դաշտագործության տեխնիկայում կատարվելիք ամենապարզ բարեկավումների, վորոնք մատչելի յեն յուրաքանչյուր տնտեսության և վորոնք նպաստում են բերքի դրակի բարձրացմանը:

ՊԱՅՏԱՐԻՐ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵԾ

Այսպես, որինակ, Հայաստանի և Նախիջևանի հանրապետության բամբակագործական բազմաթիվ շրջաններ տառապատմ են այսպես կոչված «չորսից» (մանըը միջատ): Այդ վնասատուի դեմ պայքարելու, բամբակի դաշտերը ծծումբ սրսկելու համար մեղ մոտ ամեն տարի ծախսվում են զգալի գումարներ: Մինչդեռ պարզվել է, վոր այդ միջամտն ապրում ու բազմանում է մոլախոտերի մեջ, վորոնք առատությամբ աճում են բամբակի արտերի շրջապատում, միջնահատերում:

Ադրումինիմումի վերաբերյալ որենքի պահանջներից մեկն ե—ճնճել միջնահատերի, ինչպես և ճանապարհների մոտ գոնվող առուների մոլախոտերը և ազատել նրանցից դաշտերը: Բնդ վորում, յեթե այդ աշխատանքը ժամանակին կատարվի, այսինքն, յեթե դաշտերի շուրջն աճող մոլախոտերը ճնճել մինչեւ նըրանց սերմերի հասունանալը, այդ դեպքում համառու ենք յերկու նսլատակի: —մի կողմից՝ մենք ճնարավորություն չենք տալիս այդ բույսերին սերմակալելու և դրանով իսկ մեզ համար դյուրացնում ենք հետաքապացքարը նրանց դեմ, իսկ մյուս կողմից՝ նպաստում ենք բոլորովին մաքրելու դաշտերը մոլախոտերէց:

Ինքնըստինքյան պարզ է, վոր այդ ձեռնարկումը

պետք և կիրաւութել ամենուրեք և վոչ միտյն բամբակի
Հերաբերժամբ:

«Ինչ ցանես, այս կհնձես», —ասում և առածը: Եւ-
թե մենք ժամանակին միջոցներ ձեռք առնենք, վոր-
պեսզի դաշտում բուսնի միամ այն, ինչ վոր մենք դի-
տակցաբար ցանել ենք, այդ դեպքում դաշտը մեղ կաս
մեծ բերք: Իսկ դաշտերում մոլախոտերը թողնելով
մենք ստանում ենք ամենավատ բերքը: Մոլախոտն տ-
ճում և ի հաշիվ նրա, ինչ մեղ հարկավոր և:

ՈՒԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՅՆԱՎԱՐԻՆ ՅԵՎ ԴԱՅԵՐԻ ՎՈՐՈԳՄԱՆ

Բամբակի վերաբերմամբ, —վորը մեր ժողովրդա-
կան տնտեսության համար կարևորագույն հումքային
մթերքներից մեկն և և վորին պետք և ամենամեծ ուշա-
դրությունը նվիրել 1931 թվի ցանքի կամպանիայում, —
անհատական չքաղոր և միջակ տնտեսությունները,
ժանավանդ կոլտնտեսությունները պետք և կիրառեն մի
շարք չափազանց կարևոր ձեռնարկումներ նրա (բամբա-
կի) բերքը բարձրացնելու համար:

Վորպես այդպիսի ձեռնարկում կարևորագույն-
ներից մեկն և աշնան հերկը, այսինքն յերբ բամբակի
համար հատկացված տարածությունները հերկվում են
աշնանից, բամբակը հավաքելուց հետո: Տրակտորներ
լինելու դեպքում այդ աշխատանքը բամբակագործա-
կան շրջաններում կարելի յե կատարել, համեմատա-
րար, հեշտ կերպով:

Կուռակցական և խորհրդային բարձրագույն որ-
դամները սահմանել են, վորպեսզի այս տարի աշնան

Հերկ կատարվի բամբակագործական շրջաններում
110·000 հեկտար, իսկ ընդունենը 163·000 հեկտար:

Աշնանավարդն հսկայական նշանակություն ունի:
Հերկված հողի կոչտերը մոլախոտերի արմատների հետ
միասին յենթարկվում են ցրտերի ներգործությանը, վո-
րոնք, նախ և առաջ, վոչնչացնում են մոլախոտերի
սաղմելը:

Ինքնին պարզ և, վոր աշնան հերկը պետք և կատար-
վի, ըստ հմարավորության, բոլոր շրջաններում, գար-
նան ամեն տեսակ ցաների համար, վորովհետեւ աշնան
հերկը ոգտավետ կլինի ամենուրեք, վորպես պայքարի
միջոց մոլախոտերի դեմ:

Բացի դրանից, աշնանավարդն ոգտավետ և նաև այն
տեսակետից, վոր նա նպաստում և, վորպեսզի փիխրունա-
ցած հողը ծծի և իր մեջ պահի ձմեռվա ընթացքում
տեղացող անձրեներից և ձյունից մնացած խոնաշու-
թյունը: Կոշտ, չերկված հողի վրա անձրեի ջո բե
հոսում գնում և համարյա ամբողջովին, իսկ դարնանը
հալած ձյունը նույնպես քիչ և ծծվում հողի մեջ: Իսկ
հերկված հողը սպունդի պես իր մեջ և ծծում ամբողջ
այդ խոնալությունը, ըստ վորում դարնանը հերկ-
ված հողում կարելի յե ավելի շուտ ցանք սկսել,
վորովհետեւ հարկ չի լինի սպասել, վոր բոլորովին ցա-
մաքի, հարկ չի լինի հողը խոր հերկել նրա ստորին
խոնավ շերտերն արեին տալու համար:

Բամբակագործական շրջաններում, աշնան հերկը
կատարելուց հետո, դաշտը պետք և ջրել (ձմեռվա
արաթ): Նման վոռոգումը լրացնում և այդ շրջաննե-
րում անբավարար քանակությամբ տեղացող անձրենե-
րի և ձյունի պահանը և այդպիսով բամբակի համար
հողի մեջ ապահովվում է խոնավության այն քա-

նակը, վերն անհրաժեշտ և բարնանք սերմերն ուռչելու և ծելու համար:

Այդ խիստ կարեոր հանգամանք ե, վորովհետեւ յամաք հողում ցանք անելու դեպքում սերմերը ծլելու համար պահանջվում ե ցանելուց անմիջապես հետո չթել: Կավային հողերում այդպիսի վոռովման հետեւ վանքով գոյանում ե կեղե, վորը դժվարացնում և սերմի ծլելը և հարկավոր ե լինում կեղեվը կոտրել տափանով: Իսկ շարքացանի դեպքում, մինչև ծիլերի յերեալը, ինչպես վոռովումը, նույնպես և տափանելը չժվարին գործ ե. սերմերը ջուրը տանում ե և շարքերը քայլայվում են, վորը դժվարացնում ե շարքացանի բամբակի հետագա ժակումը:

Այս բոլորը վկայում են, թե բամբակի համար ինչպիսի խոչոր նշանակություն ունի աշնան հերկը և ցանքից առաջ հողը ջրելը (գարնան արաթ):

ՅԱՆԻՔ ՏԵՍԱԿԱՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ

Ազրոմինիմումի հաջորդ հրահանդն ե—ցանել անսակալորված սերմեր:

Համ բերք ստանալու հույս կարելի յէ ունենալ միայն այն դեպքում, յեթե ցանում են տեսակավորված սերմեր, վորոնք մաքրված են ամեն տեսակ խառնուրդներից և տականքից, նաև կոտրված, նվազ սերմերից:

Սերմազտիչը ջոկում ե բոլորովին առողջ սերմերը (առաջին տեսակ) ցանելու համար, իսկ սմբածներն ու նվազները (յերկրորդ տեսակ)՝ տնտեսության մեջ գործածելու համար:

Արդեն անմիջելիորեն հաստատված ե, վոր լամ մա:

քըրված և տեսակավորված սերմերով կատարվող ցանքը տալիս ե յուրաքանչյուր հեկտարին 1-2 ցենտներ (6-12 փութ) ավելի հացահատիկ:

Սերմերի գումարը և տեսակավորումը պետք ե կիրառել բոլոր տնտեսություններում:

Մենք սերմազտիչ մեքենաներ (արիերներ) ունենք բոլոր խորհրդական տեսակավորություններում և համարյա բոլոր կոլտնտեսություններում: Կան նաև սերմազտիչ կայաններ և շարժական սերմազտիչ գումակներ: Զի կարող լինել այնպիսի դրություն, վոր ցանկություն ունենալու դեպքում հնարավորություն չկի տեսակավորել սերմերը: Իհարկե, յեթե այդ գործը հետաձգվի մինչև դարում, մինչև ցանքի ժամանակը, այդ դեպքում, հավանորեն, բոլորը չեն կարողանա տեսակավորել իրենց սերմացուն: Ցանքի համար սերմացու պետք ե ջոկել վաղորոք, ճմենվանից սկսած:

Սերմանման ազրովիադորի միջոցով պետք ե ստանալ սերմազտիչ մեքենա, տանել գյուղը և այնպիս ուղարկործել այն, վոր մեքենան ունենա լրիվ բեռնվածություն: Սերմազտիչ մեքենաները վոչ մի որ պարագուրդ չպետք ե ունենան, վոչ մի սերմազտիչ մեքենա չպետք ե մնա առանց աշխատանքի:

Ցանքի համար պատրաստված հացաբույսերի սերմացուն, բացի դրանից, պետք ե ցանելուց առաջ ախտահանել:

Սերմացը ախտահանումը — միջոց ե մրիկի գերմ: Մրիկը — սնկային հիվանդություն ե, վորը մը ի նման նստում ե ցորենի, գարու, վարսակի, կորեկի, յեգիաբուցորենի հասկերի վրա: Հացահատիկային բույսերն ամենից շուտ հիվանդանում են խոնավ ամուսնություն:

Մը ի կը վոչնչացնում ե հացահատիկը և վնասու-
կար ե թե մարդու և թե կենդանու առողջության հա-
մար։ Մի քանի շրջաններում մը ի կը բավականաչափ
տարածված ե և վոչնչացնում ե ցանքի մինչև մի յեր-
րորդ մասը։

Այդ հիգանդությունից աղատվելու միջոց ե ծառա-
յում սերմացուները փորմալինի լուծույթով ախտահա-
նելը, վարը կարելի յէ ստանալ աղբովիազորի միջոցով
Միջդորձկոմի հողբաժնում։

Ախտահանումից հետո մը ի ըոլորդին անհետա-
յում ե ։ Հարկավոր ե միայն, վորպեսզի սերմացուներն
ախտահանեն բոլոր տնտեսությունները, վորովհետեւ
չախտահանված սերմեր ցանող շրջանից վարակը հեշ-
տությամբ տարածվում ե մյուս մը ջանները։ Ահա թե
ինչու հատկապես այն ոտքններում, վորտեղ մը ի կն
զգալի չափով տարածվել ե, չպետք ե լինի և վոչ մի
փութ չախտահանված սերմացու։ Այդ են պահանջում
բոլոր տնտեսությունների չահերը և դրան պետք ե
խստիվ հետեւել, պարտավորեցնելով բոլոր տնտեսու-
թյուններին ախտահանել սերմացուները։

Ինչ վերաբերում ե բամբակին, պետք ե ցանել
միայն շրջամբակմիությունից ստացված սերմեր։
Այդ սերմերը վոչ միայն լավն են և առողջ, այլև տե-
սակավոր են ու հատկապես այն տեսակից են, վորն ա-
մենահարմարն ե տվյալ մը ջանի համար։

ԲԱՄԲԱԿԵ ՑԱՆԻՐ ԾՐՔԵՐՈՎ

Պետք ե ցանել անպայման շարքերով։ Շարքա-
յանը տախու և սերմացվի խնայողություն, շարքայան
մեջնակ, սերժերը տեղափոխում ե գաղտում համաշա-

փորեն և մինենույն խորությամբ, վորով նպաստում է
ուերժմերը ներդաշնակ կերպով միաժամանակ ձևելուն։

Մասնավորապես, բամբակի վերաբերմամբ, շար-
քայանը հեշտացնում ե և հետագա աշխատանքները
նրան խնամելու համար։ Աձման շրջանում բամբակը
պետք ե քաղհանել և ջրել։ Բամբակի քաղհանը բարդ
աշխատանքներից մեկն ե ։ Սակայն այդ աշխատանքը և
ամենամանրակիկին ե, ամենաանհրաժեշտն ե, վորով-
հետեւ դրանից ե կախված բերքի վերջնական վիճակը։
Կավ քաղհանած բամբակի արտք մինչև իսկ զրի պա-
կատության դեպքում ել ավելի մեծ բերք կոտ, քան
տոտառությամբ զրված, բայց մոլախոտով լի արտք։

Շարքացանը դյուրացնում ե բամբակի քաղհանի
աշխատանքը։ Դա հնարավորություն և տախու սպառվել
ձիու՝ քաղհան մեքենաներով, իսկ հետո նաև բկլից գոր-
ծիքներով, վորոնք վոփոլացնելով հողը բամբակի շար-
քերի միջն, նպաստում են բույսի լավ աճելուն։ Այդ-
ու գոփովացնելլ հատկապես անհրաժեշտ ե ջրելուց
հետո, յերբ հողը խստանում ե և ողի հոսանքը դեպի
բույսի արմատները դժվարանում ե, — իսկ ողը բամ-
բակի բույսի համար անհրաժեշտ ե նույնպես, ինչպիս և
ջուրն ու այլ սննդաբար նյութերը։

ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆԻՐ ՎԵՐՁԱՑՐՈՒ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԻՍԻ 10-Ը

Աշնան հերկը և «արաթը» (ցանելուց առաջ ջրելը)
նպաստում են բամբակի ցանքը ժամանակին կատարե-
լուն, վարը նույնպես վճռական պայմանն ե հանդիսա-
նում լավ բերք ապահովելու համար։ Բամբակին ու ու-
ցանելու հետեւանքով, ինչպիս ցույց ե տալիս վերը։



յեցկու տարիների փորձը, կնքուղները մասուցածար մնում են առանց բացվելու և — ինչպէս այդ մատնանշված ե Համ . Կ(բ)Կ Անդրյերկոմի դեկտեմբերի 22-ի վորոշան մեջ, — բերքատվությունը կատաստրոֆիկ կերպով ընկնում է:

Բամբակի ցանքը պետք ե վերջացնել վոչ ուշ քան մայիսի 10-ին . դրանից ե կախված բամբակի կամպանիայի հաջողությունը: Բամբակի ցանքի կատարումը ժամկետներին, — վորոնք յուրաքանչյուր շրջանի համար մատնանշված են Հողդողկոմատի և բամբակագործական կոոպերացիայի կողմից, — պարտադիր պետք ե լինեն բոլոր բամբակացանների համար: Ցանքի ժամկետները խախտելը հավասարազոր ե բերքը վիճեցնելուն: Այս պետք ե հիշի յուրաքանչյուր կոլտնտեսություն, յուրաքանչյուր չքավոր և միջակ գյուղացի:

ՈՒԾԿՐԻՒՅՅԻՆ ՎՈՐՈԳՎԱՆ ԶՐԻՆ, ՎՈՐՈԳՄԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻՆ

Մեր մի շաբաթ շրջանների համար վոռոգման ջուրը բերք ստանալու հիմնական պայմանն է: Հատկապես այդ կարևոր ե Անդրկովկասի բամբակագործական շրջանների համար, վորոնք ջրի խիստ կարիք են դրու՞ : Խորհրդային իշխանությունը միլիոնավոր ռուբլիներ է գնում Մուղանի, Միլի, Սարդարաբադի և մի շաբաթ այլ գաշտերի վոռոգման գործի մեջ: Կառուցմել են ջրանցքներ, վորոնցով ջուր ե բերվում բամբակագործական շրջանները, հիմնվել են ջրհան մեքենաներ, «չարխեր», — և այս բոլորը նրա համար, վորպեսպի բամբակի ցանքերն ապահովվեն ջրով: Ջրոնասությունները և շրջգործկոմներն իրենց կողմից պետք ե

վաղորոք ամեն միջոց ձեռք առնեն յրանտեսության կտորուցումների անհրաժեշտ նորոգումը և օտուգումը կատարելու մինչև ցանքի կամպանիան սկսելը: Սակայն այդ գործում անհրաժեշտ ե նաև կոլտնտեսական, չքավոր և միջակ բամբակացանների մասնակցությունը: Հարկավոր ե առանց հապաղելու ձեռնարկել վոռոգման տեղական ցանքի, յահրիզների և չարիսերի նորոգմանը, մաքրել առուները տիղմից և քոլերից, վորոնք, սովորաբար տարածված լինելով առուներում, խանդարում են ջրի հոսանքին և առաջ են բերում առուների ճեղքվածք ու ջրի ակամա վասնում:

Ինստ կարևոր ե ստուգի առվի ամբողջ ըմբացքը, լցնել ջուր բաց բողներու համար 1930 թվին բացած անցքերը և առուներն այնպիսի վիճակի մեջ դնել, վորպեսի նրանցով կարելի լինի տանել այն ամբողջ ջուրը, վորը պետք ե անցնի այնանդից:

Վոռոգման ցանցի վերաբերմամբ հազ տանելու, ինչպես և վոռոգման մանր կառուցաւմներ չինելու համար հարկավոր ե չքավոր-միջակ տնտեսություններից կաղմակերպել մելիորատիվ ընկերություններ, վորոնք ուղավելու յեն այդ կառուցաւմներից: Դա լավագույն ձեռն ե ժամանակին շինարարություն կառարելու և վոռոգման ցանցը լավ ինստելու համար:

Հատկապես կարևոր ե խնայողաբար վերաբերվելը վոռոգման ջրին: Հարկավոր ե ամեն կերպ սայշար մղել ջուրը գիշատիչ կերպով սպուտործելու և առօներին անփույր վերաբերմունք ցույց տալու դեմ: Յուրաքանչյուր բամբակացան ինքը չպետք ե թույլ տա այդպիսի վերաբերմունք ջրի նկատմամբ, այլև պետք ե հետեւ ու զգուշացնի ուրիշներին ջուրը զիշատիչ կերպով ժախսելուց:

Ընդ սմին պետք է հիշել, վոր ջրի առաւտությունն աժենակին ել չի նպաստում բերքի բարձրացմանը: Ավելորդ ջրելք, սառեցնելով հողը, գանդաղեցնում է բաժակի տճումը: Ավելորդ ջրելք, վորը մի քանի որով արտը դարձնում է ճահիճ, միայն գաղարեցնում է բաժբակի ածումը, նպաստում է մոլախոտերի զարդացմանը, խտացնում է հողը, իսկ այդ բոլորն իջեցնում է բերքը:

Յեկ այս դեպքում նորից յերեան է դալիս շարքացանի հսկայական նշանակությունը:

Շարքացանի դեպքում ջուրը հսում, անցնում է շարքերի միջով, ծծվում է հողի մեջ, առանց ճահճացնելու նրա մակերևությը, իսկ ջրելուց հետո—քաղհան մեքենաները փոփոլացնում են հողը:

Բացի դրանից, շարքացանի դեպքում զգալի չափով ջրի խնայողություն է լինում և, մինչև իսկ ջրի պակասության դեպքում, քաղհանի և փոփոլացնելու չորչիվ, բամբակն այնքան ել չի տուժում յերաշտից:

ՊԱՐԱՐՏԱՑՐՈՒ ՀՐՂԸ

Ապրոմինիմումով նախատեսված բոլոր մեր մատնանշած ձեռնարկումները, վորոնք անպայման բարձրացնում են բերքատվությունը, խոսում են ճիշտ ցանքի և բույսը ինամելու ձեւերի մասին: Սակայն այդ դեռևս բավական չե: Զե վոր դաշտից հավաքելով ու տանելով բերքը, մենք նրա հետ միասին դուրս ենք տանում նաև հողի այն մասերը, վորոնք նյութ են դարձել բույսի-հացահատիկի, բամբակի և այլն գուցման համար: Ամեն տարի լավ բերք ստանալու հա-

մար հարկավոր ե հոդ տանել հողին վերաբարենելու այն, ինչ վոր նա տվել է բույսին: Դրան հարելի իւ համենել եսղը պարարտացնելու միջոցով:

Ամեն մի գյուղացի դիտե, թե վորքան ոգտավետ է սնասունի աղբը հողին խառնելը, մինչդեռ մեր շրջանների մեծ մասը անսասունի աղբը դործ է ածում միայն վորպես վառելանյութ կամ լավադույն դեպքում, վորպես պարարտանյութ բանջարանոցների համար:

Անասունի աղբը— ամենալավ, ամենից լրիվ և ամենաեժան պարարտանյութն է, վորը կա յուրաքանչյուր կուտանտեսության, յուրաքանչյուր անհատ արնատեսության տակ: Այդ պատճառով պետք է ըստ հնարավորության խնամքով վերաբերվել անասունի աղբին և այն դուրս հանել դաշտը: Մինչև անդամ քրամմային տակի հողն ել, վորն իր մեջ է ծծած լինում աղբային հեղուկը, խիստ ոգտավետ պարարտանյութ է դաշտերի համար:

Նմանապես և տնտեսության մեջ գոյացած մոխիրը կարող է և պետք է ծառայի վորպես պարարտանյութ դաշտերի համար, վորովհետեւ նա նույնպես իր մեջ պարունակում է բույսերի համար անհրաժեշտ նյութեր:

Դաշտերի պարարտացման համար հավաքվող մոխիրը հարկավոր է կենտրոնացնել մի կույտ կազմել, խորը պաշտպանված պետք է լինի անձրևից ու ձյուդուցից, վորովհետեւ չուրը դիպչելով մոխիրին՝ նրա միջից տանում է պետքական աղերը:

Բացի անասունի աղբից և մոխիրից, յուրաքանչյուր տնտեսության մեջ սօտացվում են բավականաչափ և այլ թափթիուկներ, վորոնցով աղտօտվում են մեր գյուղե-

ըբ: Մինչեւու, յեթե բոլոր այդ թափթփսւկները հա-
գաքվեն մի տեղ և այնտեղ մնան այնքան, մինչև զոր
նեխեն, — կստացվի իր վորակով անասունի աղբից
հետ չմնացող պարարտանյութ: Այդպիսի աղբակու-
տերի տեղերը կոչվում են կոմպոստներ, վորոնց մեջ
կարող են մտնել մոլախոտեր, սպանված և սատկած
անասունների ու թռչունների փորոտիքը և լիշերը,
թռչունի ծերտը, մարդու կղկղանքը, մոխիրը և այլ
թափթփուկներ:

Բամբակի ցանքերի համար, — նկատի առնելով
բամբակի խոշոր նշանակությունը ժողովրդական տըն-
տեսության համար և բամբակի արժեքովորությու-
նը, — ոգտավետ են այսպիսի պարարտանյութերի
գործածությունը, վորոնցից տնտեսության մեջ շկան,
և վորը պետք ե գնել դրսից: Այդ ուղարարունյութե-
րը, — վորոնք առանձին խառնուրդ են՝ բաղկացած զա-
նազան աղերից քուսպի հետ միասին, — բամբակացան-
ները կարող են ստանալ շրջբամբակմիություններից՝
ոերմացուների հետ միասին:

Յերեք-չորս տարի սրանից առաջ բամբակի դաշ-
տերի պարարտացումն այդպիսի խառնուրդով կատար-
վեց վորպես փորձ: Այդ փորձերը ցույց տվեցին այդ-
պիսի պարարտացման ամրող ոգտավետությունը:
Վերոհիշյալ խառնուրդով պարարտացված բամբակի
դաշտերի բերքը բարձրացավ 25 տոկոսով, այսինքն
35—45 փութ բամբակի փոխարեն ստացվում ե մինչև
55—60 փութ:

1931 թվին, համաձայն կառավարության վորո-
շան, Անդրկովկասում այդ խառնուրդով պետք ե պա-
րարտացվեն 85.000 հեկտար բամբակի ցանքեր, վորի

շնորհիվ ավելանալու յև ստացվելիք դուռ բամբակի
ամբողջ ապրանքային մասսան:

Յուրաքանչյուր բամբակացանի, բամբակադործա-
կան կոլտնտեսության պարտականությունն եւ՝ ուշա-
դրությամբ վերաբերվել պարարտացման այդ յեղա-
նակին և ստացած պարարտանյութը բարեխղճորեն
ժամանակին ցըել արտում:

Դեպքեր են յեղել, յերբ անգիտակից գյուղացինե-
րը, կուլակներից դրդված, իրենց ստացած խառնուրդը
տեղ չեն հասցըրել և թափել են կամ ճանապարհների
մոտի առուները, կամ ուղղակի կույտերով ցըել, թա-
փել են դաշտում: Ագրոլիազորները, գիտակից գյու-
ղացիները և կոլտնտեսականները պետք ե յերևան հա-
նեն այդպիսի վնասարարներին և նրանց արարքը հա-
սարակական պարուավանքի յենթարկեն:

Բացի կուլակներից և տերտերներից, վորոնք ձըդ-
տում են խանգարել գյուղատնտեսության զարգացմա-
նը, Խորհրդային իշխանության ամրացմանը և չքավոր
գյուղացիության տնտեսության բարելավմանն ու կոլ-
տնտեսությունների զարգացմանը, — մենք ունենք և
ուրիշ թշնամիներ: Այդ թշնամիները միջատներն են,
վորոնք հարձակվում են մեր դաշտերի վրա և վնասում
են ցանքերին ու տունկերին: Այդ վնասատուների գեմ
պետք ե անինա պայքար մղել, վորն ագրոմինիմումի
պարտադիր մասն ե:

Վնասատուների դեմ մղվող պայքարը հաջողու-
թյուն ե ունենում միայն այն դեպքում, յերբ բոլորն են
պարարտ մղում: Հակառակ դեպքում վնասատուները
կտարածվեն հարևան դաշտերը և այդիները և կվորե-
ցնեն բերքը:

Այդ տեսակեաթյ, պետք և ճիշտ կերպով և ժամանակին կատարել գյուղատնտեսների, հողորդանների և առողջազորների խորհուրդները:

Կանգ առնենք նաև մի կետի վրա, վորը խիստ կարևոր և լավ բերք ստանալու համար: Դա— բանվորական ուժի հարցն ե, բանվորական ուժը ճիշտ ոգտագործելու, դաշտային անհրաժեշտ աշխատանքները ժամանակին բանվորական ձեռքերով աղահովելու հարցըն ե:

Անցյալ տարվա փորձը ցույց տվեց, վոր թե հացատիկային և թե բամբակագործական շրջաններում վիճակից բանվորական ձեռքերի պակասությունից վոչ միայն անհատական տնտեսություններում, այլև կոլտնտեսություններում: Հարկ յեղափ գյուղին քաղաքից ողնության ուղարկել բբիդադներ: Սակայն բերքահավաքի գործի ուշացումն ազդեց, իհարկե, բերքի վրա: Հացահատիկը թափվեց, բամբակը ցրիվ տրվեց և գետին ընկնելով կեղտոտվեց ու ընկափ նրա վորակը:

Այս բոլորը պարտադիր են դպրձնում ապագայում աշխատանքների ճիշտ բաշխում և բանվորական ուժի դասավորում կատարել, նաև բարձրացնել աշխատանքային դիսցիպլինան հատկապես կոլտնտեսություններում, վորոնք որինակ պետք է ծառայեն շրջապատի անհատ տնտեսությունների համար:

Այնպիսի աշխատանքների համար, ինչպիսին բամբակի քաղաքն ե, կամ չանաքը, ծխախոտի տերևների հավաքն ե, տղամարդու աշխատանքի հարևների հավաքն ե, աղամարդու աշխատանքի հարևների հարևնի յելայն չափով կիրառել թե կանանց աշխատանքը և թե անչափահանների աղամարդուը: Այդ աշ-

խատանքների համար կօբանատեսություններում պետք է կազմակերպել համարկ բրիգադներ:

Ճիշտ կազմակերպելով աշխատանքները և ժամանակին կիրառելով այստեղ մասնանշված՝ ցանքի, լիչպես նաև դաշտերին հոգ տանելու յեղանակները, մենք հետառությամբ կարող ենք բարձրացնել բամբակի ցանքների բերքատվությունը մինչև 8,5 ցենտների յուրաքանչյուր հեկտարից, վորը վորպես նվազագույն թիվ սահմանված և կառավարության վորոշումով:

Կատարված մի շաբթ դիմողությունները և զանազան շրջաններում ագրոտեխնիկական ձեռնարկումներ կիրառելու արդյունքների հաշվառումը ցույց տվեցին, վոր յուրաքանչյուր ձեռնարկում բերքը բարձրացնում է 10—25 տոկոսով:

ԶԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ	ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՄԸ ՄՈՂՈՆՆԵՐՈՎ
Հացահատիկ	Բամբակ
Գութանի վազ հերկ . . .	10
Գութանի աշնան հերկ . . .	— 15
Սերմացվի գոտում և ախտաճ.	15 15
Ցեսակավոր սերմեր	20 15
Շարքացան	10 —
Կուլտիվացիա	— 25
Պարաբացում	— 25

Մատնանշված ձեռնարկումները հացահատիկային կուլտուրաների բերքն ավելացնում են 25—30 փթով, իսկ բամբակինը— 30—40 փթով յուրաքանչյուր հեկտարին, վորն աղելացնում է հացահատիկային կու-

սուրաների յեկամուտն ավելի քան 50 ռուբլով 46-
առին, իսկ բամբակինը— 150 ռուբլով:

Մասնավորապես, Անդրկովկարի առանձին հանրա-
պետություններում, պարզվեց, վոր շարքացանից,
մեր մշակվել ե շարքերի միջին տարածությունը, բամ-
բակի բերքը բարձրացել ե ավելի քան կիսով չափ. Ա-
յստանում 5 ցենտների փոխարեն ստացվել ե 8, Հա-
ն-ի փոխարեն 6 ցենտների փոխարեն— 9 և Վրաստանում

Այս թվերը ցույց են տալիս ագրոմինիմումի կիրառ-
ման աճքողջ ոգտավետությունը:

ԿՈՆՏՐԱԿՏԱՅԻՆ ԿԱՊԱՀՈՎԾԻ ԱԳՐՈՄԻՒՄՈՒ- ՄՐ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ագրոմինիմումի մասին խոսելիս պետք է մատնա-
նչել, վոր խորհրդային իշխանությունը չի սահմա-
նակվում միայն այստեղ մատնանշված հիմնական
ձեռնարկումները պարտադիր կարգով կիրառելով, այ-
ստեն կերպ նաև ողնում ե նրանց իրագործմանը:

Նախ և առաջ այդ ձեռք ե բերվում կոնտրակտա-
ցիայի միջոցով: Կոնտրակտացիայի դեպքում յերկո-
պայմանագրի կողմերը (կոլտնտեսություն և դյուլա-
տնտեսական կոռպերացիա) հանձն են առնում վորոշա-
կի պարտավորություններ:

Յեթե կոնտրակտացիոն պայմանագրի ստորագրող
կոլտնտեսության, կամ անհատականի (չքայլորի և մի-
ջակի) համար պարտադիր է դառնում վորոշ ձեռնար-
կումների կիրառումը, ապա պետությունն ել, հանձնն
չյուղատնտեսական կոռպերացիայի համապատասխան
միության (Բամբակմիություն, Դաշտագործական

միություն), իր կազմից պարագվորվում և այդպիսի
կոլտնտեսություններին և անհատականներին հնարա-
վորություն ընձեռել այդ ձեռնարկումները կիրառելու
համար, տրամադրելով նրանց անհրաժեշտ մեջնատ-
ներ, տեսակավոր սերմեր, վնասատուների դեմ պայ-
քարելու միջոցներ և այլն, նմանապես ողնության և
հասնում իր գյուղատնտեսներով:

Գյուղատնտեսը ցույց կտա կոլտնտեսությանը և
անհատականին, թե ինչպես պետք ե ոգտագործել մե-
քենան, ինչպես պետք ե կազմակերպել ցանքաշրջանը,
կողնի նրանց բոլոր այն հարցերի լուծման գործում,
վորոնք գյուղացնում են տնտեսություն վարելը:

Ագրոմինիմումի կիրառման հաջողությունն զգալի
չափով կախված է այդ ողնությունից, այդ պատճա-
ռով յուրաքանչյուր բամբակագործ և հացահատիկ ցա-
նող գյուղացի պետք է ձգտի կոնտրակտացիոն պայ-
մանագիր կնքել:

1931 թվի դարնան կամպանիային միջակի և չքա-
վորի վոչ մի արտ, վոչ մի կոլտնտեսություն չպետք ե
գուրս մնան կոնտրակտացիայից— այդ կապահովի
նրա համար բերքի այն բարձրացումը, վորին մենք ա-
մեն կերպ ձգտում ենք:

ԵՆՏՐԵՑԵՇ ԱԳՐՈԼԻՍԶՈՐՆԵՐ

Բերքի բարձրացման վերաբերյալ բոլոր անհրա-
ժեշտ ամենապարզ ձեռնարկումներն իրագործելու հա-
մար գյուղերում առավել ակտիվ գյուղացիներից
պետք ե ընտրել ազգութագործներ, վորոնք պործով իրա-
կանացնում են կոնտրոլ՝ առանձին տնտեսություննե-
րի և կորոնտեսությունների կողմից ագրոմինիմումը

Ճիշտ և ճամանակին կրամաբերութ վերաբերմամբ, այս աղբումինիմումը, վորն ընդունվել է կոնտրակտացիոն պայմանագրերով և պարտադիր վորոշումների կարգով: Խոկ վոր գլխավորն ե, աղբուլիքազորները պետք ե ամեն միջոցով նպաստեն գյուղատնտեսության կոլեկտիվացման արագացմանը, ոգնեն արտադրական կոռպերացմանը և արտադրական կոնտրակտացիայի իրադրժմանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բերքատվության բարձրացման գործում վճռական և առաջնակարգ նշանակություն ունի նաև կոլտնտեսական և բատրակ-չքավորական ակտիվի ինքնազործունեյությունն ու կոնտրոլը: Այդ նպատակով պետք է կարգի բերել գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների, գյուղխորհուրդների սեկցիաների, կանանց պատղամավորական ժողովների աշխատանքը:

Արտադրական խորհրդակցությունների, պատգամավորական ժողովների և այլն, նպատակն ե— գյուղի կոլտնտեսական, բատրակ-չքավորական և միջակ մասներին լայն չափով ներդրավել գյուղատնտեսության սոցիալիստական վերտիկալուցման գործի մեջ:

Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները մշակում և կիրառում են ձեռնարկումներ՝ իրենց շրջանի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար, նաև իրենց շրջանի ցանքերի տարածության ընդարձակման, բերքատվության բարձրացման, անառնարարության և գյուղատնտեսության

մասն այուղերի զարգացման համար՝ ինչպես խորհրդատեսություններում ու կոլտնտեսություններում, նեյնպես և չքավոր և միջակ տնտեսություններում:

Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները քննում են՝ գյուղատնտեսության մեջ արժեքավոր բարելավումներ կատարելու համար կոլտնտեսական չքավոր-միջակ տնտեսություններին պարզեվատրելու հարցերը, այն բարելավումների համար, վորոնք բարձրացնում են դաշտերի բերքատվությունը: Այդ խորհրդակցությունները կաղմակերպում են սոցիալիստական մրցություն կոլտնտեսությունների և այլ միջավորումների միջև, քննում են ցանքի ու բերքահավաքի և այլ կամպանիաների կոնկրետ պյանները:

Արտադրական խորհրդակցությունները վորքան ավելի լայն կերպով են ընդգրկում կոլտնտեսություններին և չքավոր ու միջակ գյուղացուն, այնքան ավելի լրիվ և ավելի հաստատապես են կիրառվում բերքատվության բարձրացման, ամբողջ գյուղատնտեսության զարգացման ձեռնարկումները:

Ինքնին պարզ ե, վոր կոլտնտեսականները պետք է լինեն այդպիսի արտադրական խորհրդակցությունների ամենակտիվ անդամները:

Կոլտնտեսությունների արտադրական խորհրդակցությունները, վորոնք պետք ե գումարվեն կանոնավոր կերպով, քննում են իրենց կոլտնտեսության կոնկրետ պլանները, լսում են կոլտնտեսությունների վարչությունների հաշվետվությունները առաջիկա գարնանաշանի համար կատարված նախապատրաստական աշխատանքի մասին և այլն:

Բոլոր կոլտնտեսականները պետք ե մասնակցեն

ՄՈՅՆԱՌԱՏՎԱՆ ՄՐՑԱԹՅԱՆ ՅԵՆ
ՀԱՐՎԱՇԱՑՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

արտադրական խորհրդակցություններին և թերությունների քննադատությամբ ու իրենց առաջարկներով ոգնեն կոլտնտեսությանն ավելի լավ հիմքերի վրա դընելու տնտեսությունը և իրազործելու նշված պլանները։ Արտադրական խորհրդակցություններում, գարնան աշխատանքների պլանները մշակելիս, դեռ ևս ձմեռը պետք ե պարզել, թե ի՞նչ վիճակում ե գյուղատնտեսական գործիքների և մեքենաների գործը, պետք ե հոգտանել նորերը ձեռք բերելու մասին և հասուկ ուշադրություն դարձնել ունեցած գյուղատնտեսական ինվենտարի նորոգմանը։

«Պատրաստի՞ր ձմեռը սայլե, իսկ ամառը—սահնակը», —ասում ե ոռուսական առածը։ Զի կարելի գործիքների և մեքենաների նորոգման հարցերը հետաձգել մինչև այն ժամանակը, յերբ արդեն մոտենում է նրանց գործի գնելու ժամը։ Այդպիսով ամբողջ պլանը կրատապարտվի կործանման։ Ժամանակին նորոգում՝ կատարելլ ամենակարեվոր գործն ե։ Յեվ կոլտնտեսության կարչությունը և արտադրական խորհրդակցությունները դրան պետք ե հետեւին ամենաուշադիր կերպով։ Հակառակ դեպքում կպատահի այն, վորին անցյալ տարի ականատես յեղանք մի քանի կոլտնտեսություններում (որինակ նոր-Բայազետի շրջանում), յերբ հացահատիկները դաշտում վաճառվում եյին միայն այն բանի պատճառով, վոր սայլերն այն ժամանակ հանձնված եյին նորոգման, կամ թե դեղ դրած խուրձները փոռում եյին անձեռվիտակ միայն այն պատճառով, վոր որակտորներն ու կալսիչ մեքենաները դեռ ևս նորոգվում եյին։

Նմոն գեղքեր շատ են նկատվել Անդրկովկասում։

Տնտեսավարության նոր ճեղերը մեղնից պահանջում են աշխատանքային վերելքի նոր ձեվեր, աշխատանքի արտադրականության անպայման բարձրացում։ Աշխատանքի արտադրականության բարձրացման այդպիսի ճեղերից են սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունը, վորոնք լայն կերպով կիրառվում են ամբողջ Միության մեջ և տալիս են անժիշխական արդյունքներ։

Սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունը լայն չափով պետք ե կիրառվեն՝ ցանքի պլանականերն ինչպես կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների շրջանում, ցանքի ընկերություններում, նույնպես և անհատական բարակ-ջրավորական ու միջակ տնտեսություններում իրազործելիս։

Վորքան լայն ծավալվեն սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը կոլտնտեսականների շրջանում, այնքան ավելի հաստատապես կհազթահարի կոլտնտեսությունն իր առջև դրված խնդիրները, այնքան ավելի լավ կկատարի նա իր պլանը։

Բատրակները, չքավորները/և միջակները, կոլտընտեսականների գլխավորությամբ՝ կոմունիստական կուսակցության և խորհուրդների ղեկավարությամբ կձեռնարկեն գարնանացանի կամպանիայի բոլոր նախապատրաստական աշխատանքները ժումանակին ավարտելու դործին։

ԿՐՄՈՒՆԻՍ? ԱՎԱՆ ԿՈՒՍԿՅՈՒԹՅԱՆ
ՀԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՐԵՆԸ ԳԱՐԱՆ
ՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ, ՆՈՐ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

Առահովել 250.000 հեկտար բամբակի ցանքը, ըստանալ 8,5 ցենտներ բամբակ յուրաքանչյուր հեկտար բամբակի դաշտից —ահապասիկ այն հերթական գողծնական խնդիրը, վորը գրված և բոլոր կոլտնտեսականների, բոլոր անհատական չքավոր ու միջակ տնտեսակերերի առջեն:

Հնթացիկ տարվա գյուղատնտեսական գարնան կամպանիան պետք է նպաստի, վորպեսզի ուժեղանակ բառակ-չքավորական և միջակ տնտեսությունների նոր հարցուր-հազարյակների մասսայական հոսանքը դեպի հողատնտեսությունները:

Դրա համար բայց ենթիկան գարնան նախապատրաստական շրջանում հարկավոր ե վճռական կերպով ուժեղացնել «չքավոր և միջակ գյուղացիության կոռպերատիվ կազմակերպության զարգացումը, սկսած ավանային ընկերություններից և արտադրական ու վաճառահաման հատուկ կոռպերատիվ միավորումներից» (Համկ (բ) կ 16-րդ համագումարի բանաձելը):

Գետք և հիշել, վոր խորհրդային դաշտերի բերքատվության բարձրացման, աշխատավայրերի առաջնական բեկում կրթիվացման զարգում, անշեղութեալ հարաբերությունի յերկրի ինդուստրացման բազաբանությունը, դաշտում խիստ ստեղծելով պայմաններ՝ զյուկացնության հետ շահկապվելու արտադրական ձեփերի պարզացման համար, և ամրացնում ե բանվարդի ու չխորության դաշտներ միջակի հետ» (Համկ (բ) կ 16-րդ համագումարի բանաձելը):

Գետք և հիշել, վոր «կուտակքը դեռ ևս վերջնականացնում չի շախախմբած և նա կատաղի դիմադրություն ե ցույց տալու կողեկտիվացման հազրական առուժիվագացմանը» և ոյլ պատճառով դարնան կամպանիայի ոմբարությունում հարկավոր և «ծափակել ուժեղ հարձակամիտի կամպանիայի ամեն կուտակքի հավաքություններին ու բարտրակիներին ամեն կազմակերպությունում» (Համկ (բ) կ 16-րդ համագումարի բանաձելը):

Գետք և հիշել, վոր կուտակքություններ առաջացրեց վիճական բեկում կրթիվացման զարգում, անշեղութեալ բազաբանությունի յերկրի ինդուստրացման բազաբանությունը, դաշտում խիստ ստեղծելով պայմաններ՝ զյուկացնության հետ շահկապվելու արտադրական ձեփերի պարզացման համար, և ամրացնում ե բանվարդի ու չխորության դաշտներ միջակի հետ» (Համկ (բ) կ 16-րդ համագումարի բանաձելը):

«Կուտակքություններ վիճական բեկում առաջացրեց կուտակքացման զարգում, շնորհել նրա, վոր շախական բեկում բեկում հականեղափակիսական սրբազնության, վորի բախտականություններ անխռուսակիության տառամարտ եր դեմք զյուկացման համարական մասամբների հետ մերձնեցնան խախտում, —և բեկում ուղղանիաներին ու նրանց բազաբանություններ յերկրի ինքարվել կուտակքության կողմից կիրավող՝ յերկրի ինքարվել կուտակքության կողմից կիրավողը՝ նրան առաջին խորհրդականություններ կիմնելուց և կրտսեականությունները զարգացնելուց, ինչպես նաև կոստուլյացիայի յերարկիլել կուտակքի առաջ» (Համկ (բ) կ 16-րդ համագումարի բանաձելը):

«Ազգային գրադարան



63-

18562

Զինված բայլելիկյան վճռականությամբ և պրո-
լետարական ենուուղիազմով, կոմունիստական կուսակ-
ցության ղեկավարությամբ Անդրկովկասի կոլտնտեսո-
թյունները և չքաղորմիջակ ժամաները հաղթականո-
րեն կավարտեն 1931 թվի գարնանացանի կամունիան,
շանելով վոշ պակաս քան 250 հազար հեկտար քամբակ,
ապահովելով խորհրդային գաշտերի համար մաքսիմալ
բերքատվություն :

ԳԻՆԸ 6 ԿԾՊ.



Ա. Վարձատյան

За повышение урожайности советских полей

